Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջը 2026-2027 ուստարում կատարում է ընդունելություն հետևյալ մասնագիտություններով.

	Կրթության ձևը	Կրթության հիմքը	Ընդունելության տեղերի թիվը			Ուսման տևողությունը	Որակավորումը
			Անվճար	Վճարովի			
					Չափը		
Գործավարություն՝օտար լեզվի խորացված իմացությամբ	Առկա	հիմնական	7	13	150.000	4 տարի	Գործավար
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Առկա	հիմնական	13	7	150.000	4 տարի	Տեխնիկ-ծրագրավորող
Հաշվապահական հաշվառում	Առկա	հիմնական	0	20	150.000	3 տարի	Հաշվապահ
Նախադպրոցական կրթություն	Առկա	հիմնական	10	10	150.000	3 տարի	Դաստիարակ՝ նախադպրոցական կրթության
Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր	Առկա	հիմնական	10	10	150.000	3,6 տարի	Տեխնիկ՝ էլեկտրական կայանների, ցանցերի և համակարգերի շահագործման և տեխնիկական սպասարկման
Ապահովագրական գործ	Առկա	հիմնական	3	17	150.000	3 տարի	Գործակալ՝ ապահովագրական գործի
Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն	Առկա	հիմնական	0	20	150.000	3,5 տարի	Փորձագետ՝պարենային ապրանքների որակի փորձաքննության

Կայք էջ https://vsu.am/qolej-2/

Ֆեյբուքյան էջ https://www.facebook.com/vanajori.petakan.hamalsarani.k.olej?locale=ru_RU

Պաշտոնական էլ.հասցե vsucollege2011@gamil.com

Մասնագիտություն	Ընդունելության մրցութային առարկաներ		
Գործավարություն՝օտար լեզվի խորացված իմացությամբ	1	2	3
	Օլ	Հլգ	Հպ
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Մ	Ֆ	Հլգ
Հաշվապահական հաշվառում	Մ	Հլգ	Օլ
Նախադպրոցական կրթություն	Հլգ	Մ	Հպ
Էլեկտրական, կայաններ, ցանցեր և համակարգեր	Մ	Ֆ	Հլգ
Ապահովագրական գործ	Մ	Հլգ	Օլ
Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն	Ք	Հլգ	Մ

Օգտագործված հապավումներ.

Հլգ- Հայոց լեզու և գրականություն
ՕԼ- Օտար լեզու
Մ – Մաթեմատիկա
Ֆ- ֆիզիկա
Հպ- Հայոց պատմություն
Ք- Քիմիա

✓ Մրցույթին մասնակցելու համար դիմորդի դիմում հայտը և փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ընդունվում են Համակարգ՝ ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից սկսած, բայց ոչ ուշ, քան հուլիսի տասից.

1) ոչ ոլորտային մասնագիտություններով՝ մինչև օգոստոսի 10-ը, ժամը 18^{00} ներառյալ,

2) ոլորտային մասնագիտություններով՝ մինչև հուլիսի 24-ը, ժամը 18^{00} ներառյալ, իսկ քննություններն անցկացվում են հուլիսի 25-ից օգոստոսի 8-ը ընկած ժամանակահատվածում:

✓ Դիմորդների կողմից դիմում հայտերը Համակարգում կարող են փոփոխվել մինչև դիմումների ընդունման օրվա ավարտը:

✓ Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է փաստաթղթերի ընդունման, իսկ ոլորտային մասնագիտությունների գծով՝ քննությունների ավարտման հաջորդ աշխատանքային օրը:

✓ Դիմորդը՝ Համակարգում էլեկտրոնային եղանակով լրացնում է դիմում հայտը, որը ներառում է անձնական տվյալները (անուն ազգանուն հայրանուն, ծննդյան օր ամիս տարեթիվ, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար) և Հանրային ծառայության համարանիշը (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանքը:

✓ Դիմորդը կարող է դիմել մեկ ՄՈՒՀ-ի մեկ որակավորման (ուղղվածության) կամ մասնագիտության (մասնագիտացման) համար, այդ թվում՝ երգեցողության կամ երաժշտական գործիքի տեսակի կամ մարզաձևի հայտագրմամբ՝ անվճար և վճարովի (նախատեսված լինելու դեպքում) ուսուցման հիմունքով:

Դիմորդի հայտը պարունակում է ներքոնշյալ տեղեկությունները, որոնք ներբեռնվում են ինքնաշխատ եղանակով, իսկ դրա բացակայության կամ անհնարինության դեպքում՝ դիմորդի կողմից.

1) լուսանկար,

2) կրթության համար հիմք հանդիսացող սույն կարգի 61-րդ կետով սահմանված նախընտրած փաստաթուղթը, իսկ սույն կարգի 63-րդ կետով սահմանված դեպքում՝ միգրացիայի և քաղաքացիության ոլորտում լիազոր մարմնի տրամադրած համապատասխան փաստաթուղթը,

3) անձը հաստատող փաստաթուղթը՝ անձնագիրը, նույնականացման քարտը, զինվորական գրքույկը և այլն՝ ըստ ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի N 767 որոշմամբ սահմանված տեսակների,

4)Հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից տրված կցագրման վկայականի պատճենը,

5)սույն կարգի 14-րդ կետով սահմանված՝ ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթուղթը,

6)տեղեկանք վերջին երեք տարում սովորած և ավարտած ուսումնական հատատության մասին,

7) տեղեկանք փաստացի բնակության վայրից:

Լրացուցիչ հարցերի համար զանգահարել
Քոլեջի տնօրեն՝ Արևիկ Լոքյան 094-425-192

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

_____ ՔՈԼԵՋԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

Ք. ՎԱՆԱՁՈՐ «-------» ----------202 թ.

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարության «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, 03.10.2016 թվականի թիվ 0073 լիցենզիայով, հետագայում «Համալսարան», ի դեմս ռեկտոր Արմեն Ծատուրյանի մի կողմից և մյուս կողմից_____ (հետագայում

(անուն, հայրանուն, ազգանուն) հասցեն

Պատվիրատու) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրի առարկան ուսանողի՝ ----------

----------մասնագիտության գծով

ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի համաձայն՝ անվճար/վճարովի ուսուցում

իրականացնելու պայմաններն են:

2 . Ուսանողի իրավունքները և պարտականությունները

2.1 Քոլեջի ուսանողը իրավունք ունի՝

1)ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր(էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում է Քոլեջը

2) մասնակցել Քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով Խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին

3)մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,

4) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ

5) վճարովի հիմունքով ստանալու երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից,

6) սահմանված կարգով վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ և հակառակը

7) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով

8) անվճար օգտվել քոլեջի գրադարանից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից

9) մասնակցել Քոլեջի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը

10) ստանալ ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ուսանողական նպաստ և կրթաթոշակ:

2.2 Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում:

2.3 Քոլեջի ուսանողը և դիմորդն իրավունք ունի ծանոթանալ Քոլեջի լիցենզիային և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին /առկայության դեպքում/:

2.4 Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2.5 Քոլեջի ուսանողը պարտավոր է.

1) կատարել Քոլեջի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,

2) պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին նսահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցովնախատեսված գործառույթները

3)խնամքով վերաբերվել Քոլեջի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը

4) հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը

5) վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը

6) կատարել կրթական ծրագրերի պահանջները

7) հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին

8) բարձր պահել Քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը

9) պահպանել հասարակության բարոյական նորմերը

10) անվճար ուսուցման կարգավիճակը կորցնելու դեպքում համապատասխան կուրսի համար նախատեսված վարձավճարի չափով և սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը

11) անկախ ուսումնառության ընդհատման պատճառից մարել ուսման վարձի և /կամ գրադարանի պարտքը:

3. Քոլեջի իրավունքները և պարտականությունները

3.1 Քոլեջը պարտավորվում է կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի միջոցով:

3.2 Ուսումնառության տարիներին ապահովել ուսումնական պլաններով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող բոլոր պայմանները:

3.3 Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու քոլեջի գրադարանից, Մարզական և առողջարանական կառույցներից, ընթերցասրահից, նիստերի դահլիճից, սննդի և սոցիալական այլ ծառայություններից:

3.4 Ուսանողի կրթության և դաստիարակության գործընթացն ապահովել բարձրակարգ մասնագետներով, դասավանդման ժամանակակից մեթոդներով, դասագրքերով, ուսուցման տեխնիկական միջոցներով, ուսանողին տալ մասնագիտական կրթություն և տալ ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) համապատասխան ներդիրով:

3.5 Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կամ Լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տալ ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների

նշումով:

3.6 Ստեղծել հավասար պայմաններ առաջադիմության բարձրացման համար թե՛ անվճար և թե՛ վճարովի համակարգում կրթություն ստացող ուսանողների համար և վճարովի ուսուցման համակարգի ուսանողին սահմանված կարգով փոխադրել անվճար ուսուցման համակարգ և հակառակը:

3.7. ՄՈՒՀ-ի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կրթությունը կարող են շարունակել ԲՈՒՀ-ի համապատասխան մասնագիտությամբ 2-րդ կուրսում հեռակա ուսուցմամբ:

4. ՈՒսման վարձի վճարման կարգ և հատուկ պայմաններ

4.1.Ուսման վարձի չափը սահմանվում է քոլեջի կողմից, որը կազմում է.

1) I կուրս _____ դրամ

Առաջին կիսամյակ_____ Երկրորդ կիսամյակ_____

Յուրաքանչյուր ամիս /ըստ 9 ամիսների բաժանված/_____

2) II կուրս _____ դրամ

Առաջին կիսամյակ_____ Երկրորդ կիսամյակ_____

Յուրաքանչյուր ամիս /ըստ 9 ամիսների բաժանված/_____

3) III կուրս _____ դրամ

Առաջին կիսամյակ_____ Երկրորդ կիսամյակ_____

Յուրաքանչյուր ամիս /ըստ 9 ամիսների բաժանված/_____

4) IV կուրս _____ դրամ

Առաջին կիսամյակ_____ Երկրորդ կիսամյակ_____

Յուրաքանչյուր ամիս /ըստ 9 ամիսների բաժանված/_____

4.2 Հատուկ պայմանները.

1) Նշվում և լրացվում է մինչև տվյալ մասնագիտության համար սահմանված ուսումնառությանավարտը և այն տարբերակը, որով ուսանողը պարտավորվում է կատարել վճարումները:

2) Ուսանողի կողմից վճարումը կատարվում է նշված տարբերակի՝ յուրաքանչյուր ամսվա կամ կիսամյակի սկսելուց 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե փոխադարձ համաձայնությամբ վճարման այլ ժամկետներ չեն սահմանվում:

3) Վճարումը կարելի է կատարել ինչպես կանխիկ՝ քոլեջի դրամարկղում, այնպես էլ փոխանցումով քոլեջի հաշվեհամարին՝ _____ Հ/Հ _____:

4.3 Ուսման տևողությունը _____

5. Պայմանագրի գործողության ժամկետները վաղաժամկետ լուծարման հիմք

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և գործում է մինչև ուսանողի ուսումնառության ավարտը, բացառությամբ սույն պայմանագրի 5.2 և 6.6 կետերում նշված դեպքերի:

5.2 Ուսանողի հեռացման վերաբերյալ քոլեջի հրամանը հիմք է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: ՈՒսանողը պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծել, եթե նա կամավոր ընդհատում է ուսումնառությունը և այդ մասին դիմում է ներկայացնում տվյալ կիսամյակի քննաշրջանի սկզբից մեկ ամիս առաջ սահմանված ընթացակարգով՝ վճարելով սովորած ժամանակաշրջանի համար նախատեսված ուսման վարձը:

6. **Եզրափակիչ դրույթներ**

6.1 Կողմերն իրենց պարտականությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի ազդեցության (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

6.2 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են գործող օրենսդրության համապատասխան:
6.3 Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.4 Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից: Պայմանագիրն ի պահ է տրվում քոլեջին և ուսանողին կամ օրինական ներկայացուցիչին:
6.5 Ժամկետայի ն զինվորական ծառայության զորակոչի կամ առողջական վիճակի պատճառով ձևակերպված ակադեմիական արձակուրդից հետո վերականգնվող ուսանողի հետ նոր պայմանագիր չի կնքվում, անվճար համակարգի ուսանողը պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը, իսկ վճարովի համակարգինը՝ վճարում է նախկինում սահմանված ուսման վարձը:
6.6 Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական Գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է Տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Քոլեջից հեռացվելը:
6.7 Ուսման վարձը չմուծած ուսանողը քննաշրջան չի թույլատրվում:
6.8 Անկախ ուսումնառության ընդհատման պատճառից սույն պայմանագիրը համարվում է անվավեր և քոլեջի կողմից իրականացվում է վճարած ուսման վարձի վերահաշվարկ և ուսանողին վերադարձվում չուսումնառած ժամանակահատվածի համար վճարած գումարը

7. Պայմանագրի իրավական հիմքերը

ՈՒսանողի և քոլեջի միջև հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, <<Կրթության մասին>>, <<Նախնական (արհեստագործական) մասնագիտական և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով նայլ իրավական ակտերով:

8. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները

Ուսանողը կամ օրինական ներկայացուցիչը
Ստորագրություն _____
Անձնագիրը
Սերիա _____ Համար_____
Երբ է տրված _____

Ում կողմից _____
Հասցե _____
Հեռ. _____

Ռեկտոր՝ Ա.Ծատուրյան_____

Հասցե՝___Տիգրան Մեծի 36 _____

ՀՎՀՀ____06902542_____

«ՎՏԲ- ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» Վանաձոր

_____16036107814200_____